ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՀԱԳՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
17 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2021

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԵՎԱ ԺՈՐԱՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ՝ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ» ԹԵՄԱՅՈՎ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի պետական համալսարանի՝ ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ու գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնների՝ 17.11.2021 թ. թիվ 3 միացյալ նիստին մասնակցում էին նշյալ ամբիոններ-ի վարիչներ բ. գ. դ., պրոֆ. Ալ. Մակարյանը, բ. գ. թ., դոց. Ա. Ջրբաշյանը, ինչպես նաև այդ ամբիոնների դասախոսներ, բ. գ. դ., պրոֆեսորներ Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Ժ. Քալանթարյանը, Մ. Ջանփոլադյանը, բ. գ. թ., դոցենտներ Ռ. Էլոյանը, Վ. Ավագյանը, Ա. Գալստյանը, Վ. Եղիազարյանը, Ա. Բեքմեզյանը և բ. գ. թ. Տ. Մերջանյանը:

ԼՍԵՑԻՆ - Եվա Ժորայի Մնացականյանի՝ «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» թեմայով դոկտորական ատենախոսությունը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության

ինստիտուտում գործող՝ ԲՈԿ-ի՝ «Գրականագիտություն 003» մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ. 01.01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Բ. գ. դ., պրոֆ. պրոֆ. Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, բ. գ. թ., դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Ռ. Էլոյանը և Վ. Ավագյանը:

Ընդգծվեց, որ Եվա Մնացականյանը բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար հրապարակային պաշտպանության է ներկայացրել բանասիրական-գրականագիտական մի ծանրակշիռ ուսումնասիրություն, որը տևական ու արդյունավետ աշխատանքի արգասիք է: Այն թումանյանագիտության սկզբնավորումը վավերագրող, նրա արդյունքներն ի մի բերող, դրանք գրականագիտության արդի նվաճումների դիտանկյունից համակարգող և գիտականորեն արժևորող փաստառատ ու բովանդակալից աշխատանք է: Հաստատագրվեց, որ Ե. Մնացականյանը շրջանառել է շուրջ 130-ամյա թումանյանագիտության փաստական հարուստ նյութը, ինչն արժանահավատ է դարձնում նրա ապացուցողական բնույթը: Կարևոր է և ատենախոսության թեման, որը լրացնում է թումանյանագիտության նկատելի բացը՝ ժամանակի քննադատության մեջ Թումանյանի հանճարի աստիճանական ընկալման ընթացքը:

Ե. Մնացականյանը գիտականորեն համակարգել ու բնութագրել է ինչպես Թումանյանի տաղանդի հասունացման ու հարստացման, այնպես էլ թումանյանագիտության աստիճանական զարգացման ընթացքը:

Ատենախոսությունը տեսանելի է դարձնում Թումանյանի դասականության ճանապարհը: Այստեղ թերևս կարելի է հիշել Սենտ-Բյուվի այն դիտարկումը, թե իսկական դասականները նրանք են, ովքեր հաղթահարում են այն դժվարությունները, որոնց վրա սայթաքում են ուրիշները: Ատենախոսի աշխատությունը գնահատելի է թե՛ Թու-

մանյանի ստեղծագործության արժևորման և թե՛ մեր գրաքննադատական մտքի պատմության լուսաբանման տեսանկյունից: Այս մոտեցումն ակնառու է դարձնում, որ հայցորդը, նախ, իրոք կատարել է նյութերի հավաքման բարեխիղճ ու տքնաջան աշխատանք, ապա դրանց թեմատիկ դասդասումով, ըստ գրական խնդիրների կարևորության և իրեն հետաքրքրող գիտական հարցադրումների, ինչպես և տվյալ ժամանակահատվածի գրական ըմբռնումների հաշվառմամբ արժևորել է թումանյանագիտության զարգացման շրջափուլերը: Դրանց շնորհիվ ատենախոսությունը ձեռք է բերել բովանդակային խորք ու հարստություն:

Աշխատության չորս ծավալուն գլուխներում, որոնք ունեն մի քանի ենթագլուխներ (1-ինը՝ 4, 2-րդը՝ 5, 3-րդը՝ 6, 4-րդը՝ 3), Թումանյանի ստեղծագործությունները հստակորեն բնութագրվում են հայ գրաքննադատական մտքի համապատկերում թե՛ իր ժամանակի մեջ և թե՛ նրանից դուրս:

Արձանագրվեց, որ ատենախոսը գիտական բարեխղճության հետ միասին ցուցաբերել է գրական երևույթները դիտարկելու անուրանալի ձիրք, վիթխարի նյութը համապատասխան գլուխներում ու ենթագլուխներում դասակարգելու և դրանք դիպուկ վերնագրելու գնահատելի հմտություն: Դրանց արգասիքն են ատենախոսության կառուցվածքը, շարադրանքի հստակությունն ու գրական երևույթների բանաձևային որակումները, որոնք առավել տեսանելի են եզրակացություններում, թեև դրանք կարող էին լինել է՛լ ավելի ընդհանրացնող և գիտականորեն ավելի դիպուկ:

Առաջին գլխի ընդհանուր վերնագիրն է «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները 19-րդ դարի 90-ական թվականների գրաքննադատության գնահատմամբ», իսկ դրա ենթագլուխները նվիրված են 1890-ականների քննադատության միտումներին, Հովհաննես Թումանյանի առաջին և երկրորդ ժողովածուների գնահատականներին, «Լոռեցի Սաքոն» պոեմի քննադատությանը և Թումանյանի անդրանիկ թարգմանություններին: Այս հարցադրումները դիտարկված են 19-րդ դարավերջի «հին» ու «նոր» գեղագիտական ընկալումների, հայ իրականություն ներթափանցած փիլիսոփայական ու հասարակական նոր հայացքների, արվեստի ավանդական ու նոր

տեսությունների բախման, ազգային գաղափարաբանության և կուսակցական նեղ-մտության, գաղափարական տարբեր դավանանքների հետևորդ մամուլի հակասություններում, գրական նոր ուղղությունների, հոսանքների, դպրոցների այն մթնոլորտում, որտեղ կայացել է Թումանյանի գրական հայտնությունը:

Նույն բարեխիղճ վերաբերմունքը նա դրսևորել է ատենախոսության հաջորդ գլուխներում, որոնք առաջինի տրամաբանական շարունակությունն են: Դրանցում հաջորդաբար դիտարկվում են 1900-ական և 1910-ական թվականները՝ ուրվագծելով հայ քննադատական մտքի զարգացման թերևս ամենից բուռն ժամանակների գիտական պատմությունը:

Երրորդ գլխի 5-րդ ենթագլուխը նվիրված է 1916-ին տպագրված «Հայաստանի պոեզիան» ժողովածուին, որտեղ ատենախոսը համոզիչ դիտարկումներով բնութագրում է ռուս մտավորականների՝ Յու. Վեսելովսկու, Վ. Բրյուսովի և ուրիշների կողմից Թումանյան գրողի և նրա ստեղծագործության գնահատումը:

Չորրորդ գլխում ատենախոսը դիտարկում է խորհրդային առաջին տարիների՝ 1920-1923 թթ. քննադատության վերաբերմունքն արդեն հասուն Թումանյանի ստեղծագործության նկատմամբ: Այստեղ մեծ գրողի առանձին ստեղծագործությունների քննադատական արձագանքների հետ միասին կարևոր են նաև Թումանյան մարդու և քաղաքացու հանրային գործունեությունը, ՀՕԿ-ի նախագահի պաշտոնում նրա ուղևորությունը Կ. Պոլիս, արևմտահայ մտավորականության հետ շփումները, ինչպես նաև հայ և օտար մամուլի էջերում ու հետմահու հրատարակություններում նրա մահվան արձագանքները բնութագրող էջերը:

Կարևոր է նաև, որ ատենախոսը Հովհ. Թումանյանին ներկայացրել է որպես համահայկական երևույթ՝ անհրաժեշտ չափով անդրադառնալով նաև արևմտահայ գրական-մշակութային կյանքի գլխավոր կենտրոնի՝ Կ. Պոլսի հայ մտավորականության՝ Թումանյան գործչին ու նրա ստեղծագործությանը տված գնահատականներին, որոնց մեջ գրողը ներկայացվում է որպես համայն հայության կյանքի, իղձերի ու ձգտումների բարձրագույն արտահայտիչ: Արտահայտվողները կարևորեցին նաև արև-

մտահայ նշանավոր գրող ու քննադատ Հակոբ Օշականի՝ թումանյանական արժևորումների լուսավոր և ստվերոտ կողմերի գնահատումները:

Ընդհանրության մեջ բարձր գնահատականի արժանացած ատենախոսության կապակցությամբ արվեցին նաև մի քանի դիտողություններ, որոնց հաշվառումն ավելի կատարյալ կդարձներ այն:

1. Ժամանակի գրական-մշակութային կյանքը և նրանում Թումանյանի բացառիկ դերը բարեխղճորեն ներկայացնելու ձգտումը բազմաթիվ գիտական արժանիքների հետ միասին պայմանավորել են, սակայն, ատենախոսության անցանկալի ծավալը՝ 610 էջ: Սա գերազանցում է դոկտորական ատենախոսությունների համար սահմանված չափը: Ատենախոսը կարող էր սեղմել ասելիքը, խոսել հաճախադեպ ընդհանրացումներով, որոնց պակասն աշխատանքում իսկապես զգացվում է:

2. Ատենախոսությունը, անտարակույս, ավելի կշահեր, եթե նյութը դասակարգված լիներ ոչ թե ժամանակագրական սկզբունքով, այլ տեսական որոշակի հարցադրումների հենքի վրա: Ատենախոսության որոշակի նկարագրականությունը կարելի էր հաղթահարել նաև ընտրված մեթոդի պայմաններում, եթե ենթագլուխների վերնագրերն ունենային բովանդակություն թելադրող հարցադրումային բնույթ:

3. Ատենախոսության մեջ երբեմն հանդիպում են վրիպումներ: Բերենք դրանցից մեկը: Այսպես՝ 515-րդ էջում կարդում ենք. «Քառյակներ Թումանյանն սկսել է գրել 1916 թվականից: Բայց նրա՝ իբրև քառյակագիր բանաստեղծի դեմքը բնորոշող կատարյալ նմուշները վերաբերում են 1919–22 թվականներին»: Սա ցավալի վրիպում է, թեև նկատելի է, որ Ե. Մնացականյանն առհասարակ կատարել է թումանյանական քառյակների և դրանց անմիջական արձագանքների ճիշտ վերլուծություն: Սոսկ տեխնիկական վրիպակ է նաև 46-րդ էջում /վերևից 7-րդ տողը/ 1890-ի փոխարեն նշված 1980 թվականը:

4. Կան նկատվող մեկ-երկու անհաջող ձևակերպումներ. օրինակ՝ էջ 8-ում առկա են «Գրեթե նույն սկզբունքով է աշխատում Լ. Հախվերդյանը», էջ 10-ում՝ «Սակայն

ինչպես նախորդ ուսումնասիրողների դեպքում, դարձյալ չունենք քննադատական բընագրի ամբողջական նկարագիր» և այլն:

Այս նկատողությունները, սակայն, չեն ստվերում մեծ ու ծանրակշիռ աշխատանքը, և, ինչպես նշեցին արտահայտվողները, մատնանշվեցին որպես զգուշացում՝ ուսումնասիրողի զգոնությունը սրելու համար:

Այսօր, երբ օրախնդիր է անցյալի մշակութային արժեքների վերաիմաստավորման ու վերագնահատման անհրաժեշտությունը, Եվա Մնացականյանի ատենախոսությունը ձեռք է բերում գրապատմական կարևոր արժեք:

ՈՐՈՇԵՑԻՆ - Եվա Ժորայի Մնացականյանն ստեղծել է ամբողջական մի ուսումնասիրություն, որտեղ Թումանյանի ստեղծագործության վերաբերյալ ասված քընական գրեթե յուրաքանչյուր նշանակալից խոսք ստացել է համապատասխան գնահատական: Ատենախոսն օժտված է գրական ճաշակով, վերլուծական խոր մտքով ու սուր դիտողականությամբ՝ հատկանիշներ, որոնք ապահովել են ատենախոսության գիտական պատշաճ մակարդակը: ԵՊՀ հայ գրականության պատմության ու գրականության տեսության և քննադատության ամբիոնները «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» ատենախոսությունը միաձայն երաշխավորում են հրապարակային պաշտպանության՝ համոզված, որ նրա հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

ԵՊՀ ԱԿԱԴ. ՀՐ. ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ԱՆՎ.
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Բ.Գ.Դ., ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԵՊՀ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ԵՎ ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Բ.Գ.Թ., ԴՈՑ. Ա. ՋՐԲԱՇՅԱՆ

Հաստատում եմ բ. գ. դ., պրոֆ. Ալ. Մակարյանի և բ. գ. թ., դոց. Ա. Ջրբաշյանի ստորագրությունները:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. Գ. Թ., ԴՈՑ. Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ